ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարահարթ համայնք,
☎ 091 700 667
17.մայիսի. 2019թ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

ՊԱՐՈՆ Ա. ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ղուկասյան

Ձեզ ենք ներկայացնում Լոռու մարզի Սարահարթ համայնքի ղեկավարի թիվ 48, 49, 50 որոշումները:

Առդիր՝ 5 էջ:

Համայնքի ղեկավար՝ Ա. Փիլոյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀայաստանիՀանրապետությանԼոռու մարզիՍարահարթ համայնք,
13.մայիս2019

ՈՐՈՇՈՒՄ 48

ԻՐԱՎՈՒՆՔԸ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՉՊԱՀՊԱՆՎԱԾ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐԻ ԵՎ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների 10.06.2008թ. 27.04.2010թ ՀՀ օրենքներով, ՀՀ կառավարության 1004 որոշմամբ,ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով,ՀՀ կառավարության 18 մայիսի 2006թ թիվ912-ն որոշման 9-րդ կետի,ՀՀ 510-ն օրենքի պահանջներով<Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին>օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջով ևհիմք ընդունելով հողի բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 27.03.1993թ թիվ 1 որոշումը,հողի սահմանների ճշտության վերաբերյալ Տ. Վարդանյանի կողմից կազմված հատակագիծը և հարգելով Գագիկ Քարամյանի և մյուսների դիմում խնդրանքը այն մասին,որ Սարահարթ համայնքում 06-097-0022-0015 ծածկագրի տակ գտնվող 0.12հա սեփականության իրավունքով իրենց պատկանող տնամերձ հողամասի վրա 1990թ կառուցել են 60.01քմ մակերեսով բնակելի տուն,7.9քմ մակերեսով բնակելի տուն՝ նկուղ, 30.33քմ մառան:
Նկատի ունենալով, որ տվյալ կառույցների պահպանումը չի խաղտում այլ անձանց իրավունքները, և օրենքով պահանջող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, և քանի որ դրանք կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտում, կառուցված չեն քաղաքաշինության նորմերի և կանոնների էական խաղտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, չեն գտնվում հողային օրենսգրքով նախատեսված 60-րդ հոդվածի ցանկում, ուստի ելնելով վերոգրյալից

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Օրենքի ուժով վերականգնել և ճանաճել Գագիկ Վարազդատի Քարամյանի, Զարինե Գևորգի Գևորգյանի, Գալուստ Գագիկի Քարամյանի, Վարազդատ Գագիկի Քարամյանի, Վարդան Գագիկի Քարամյանի, Հայկ Գագիկի Քարամյանի իրավունքը Սարահարթ համայնքում 0022-0015 ծածկագրի տակ գտնվող 0.12 հա տնամերձ հողամասի և նրա վրա 1990թ կառուցված 60.01քմ մակերեսով բնակելի տան,7.9քմ մակերեսով բնակելի տան՝ նկուղի, 30.33քմ մառանի նկատմամբ:
2.Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից;

Սարահարթ համայնքի ղեկավար Ա. Փիլոյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Լոռումարզ, գ. Սարահարթ

16.մայիսի.2019թ.

ՈՐՈՇՈՒՄ 49

ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ ԲՈՂՈՔԱՐԿԵԼՈՒ ԺԱՄԿԵՏԸ ՀԱՐԳԵԼԻ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՎԱՐԱՐԵԼՈՒ և ՎԱՐՉԱԿԱՆ ԲՈՂՈՔԻ ԲԱՎԱՐԱՐՈՒՄԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2019 թվականի մայիսի 13-ին ՀՀ Լոռու մարզի Սարահարթ համայնքի բնակիչ Դավիթ Քոթանջյանը (Ներկայացուցիչ Ա.Հարությունյան) վարչական բողոք է ներկայացրել համայնքի ղեկավարին, որով խնդրել է ՀՀ Լոռու մարզի Սարահարթ համայնքի ղեկավարի կողմից ցուցաբերած անգործությունը (կամ գործողությունները) ճանաչել ոչ իրավաչափ, որը կապված է եղել Դավիթ Քոթանջյանի ընտանիքին առանց համապատասխան վարչական ակտ կայացնելու հերթացուցակից հանելու և 15.12.2008թ. հերթացուցակում չընդգրկելու հետ և Սարահարթ համայնքի 15.12.2008թ. հերթացուցակում Դավիթ Քոթանջյանի ընտանիքին հաշվառելու մասին ընդունել բարենպաստ վարչական ակտ:

Բողոք բերող անձը միաժամանակ միջնորդություն է ներկայացրել բողոքարկման ժամկետը բաց թողնելը հարգելի ճանաչելու մասին:

Ուսումնասիրելով վարչական բողոքի հիմքերը և հիմնավորումները, նկատի ունենալով, որ գյուղապետարանում առկա չէ վարչական բողոքի մասնակցին հերթացուցակից հանելու վերաբերյալ որոշում կամ դրա վերաբերյալ համայնքի բնակչին ծանուցելու վերաբերյալ այլ ապացույց, գտնում եմ, որ բողոք բերողի կողմից ներկայացված բողոքարկման ժամկետը բաց թողնելը հարգելի ճանաչելու մասին ներկայացված միջնորդությունը հիմնավոր է, ենթակա է բավարարման, իսկ վարչական բողոքը ենթակա է քննության «Վարչարարության հիմունքներ և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան:

Ինչ վերաբերում է վարչական բողոքի բավարարմանը, ապա գտնում եմ, որ այն անհիմն է և ենթակա չէ բավարարման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Սարահարթ համայնքի գյուղապետարանում առկա չեն պահպանված տեղեկություններ Սարահարթ համայնքի՝ մինչ 2008 թվականի դեկտեմբերի 15-ը կազմված հերթացուցակների վերաբերյալ: Բողոքաբերը չի ներկայացրել որևէ ապացույց այն մասին, որ Սարհարթ համայնքում նախկինում կազմվել և հաստատվել են հերթացուցակներ և իր ընտանիքը ընդգրկված է եղել նշված հերթացուցակներում, նման պայմաններում համայնքի ղեկավարը չի կարող հաստատված համարել անգործության գոյությունը ու այն ճանաչել ոչ իրավաչափ: Բարենպաստ վարչական ակտ ընդունելու վերաբերյալ խնդրամասի մասով հարկ է փաստել, որ ՀՀ կառավարության 13.11.2008թ. թիվ 1337-Ն որոշմամբ հաստատված կարգի 22-րդ կետի համաձայն համայնքի ղեկավարը 2008 թվականի դեկտեմբերի 15-ից հետո որոշում կայացնելու իրավասություն չունի, հետևաբար 2008 թվականի դեկտեմբերի 15-ից հետո համայնքի ղեկավարը որոշում կայացնելու լիազորություն չունի և այդ խնդրանքը բավարարել ևս հնարավոր չէ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 76-րդ հոդվածի բ) կետով

ՈՐՈՇԵՑԻ

- Դավիթ Քոթանջյանի կողմից ներկայացված վարչական բողոքը մերժել:
- Սույն որոշման օրինակը եռօրյա ժամկետում հանձնել Դավիթ Քոթանջյանին և պարզաբանել, որ որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ այն ստանալուն հաջորդող օրվանից երկամսյա ժամկետում:

Համայնքի ղեկավար՝ **Ա.Փիլոյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՀԱՐԹ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Լոռումարզ, գ. Սարահարթ
☎ 091 700 667, 098 700 819

16.մայիսի.2019թ.

ՈՐՈՇՈՒՄ 50

ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ ԲՈՂՈՔԱՐԿԵԼՈՒ ԺԱՄԿԵՏԸ ՀԱՐԳԵԼԻ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՎԱՐԱՐԵԼՈՒ և ՎԱՐՉԱԿԱՆ ԲՈՂՈՔԻ ԲԱՎԱՐԱՐՈՒՄԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2019 թվականի մայիսի 4-ին ՀՀ Լոռու մարզի Սարահարթ համայնքի բնակիչ Վաչագան Փիլոյանը (Ներկայացուցիչ Ա.Հարությունյան) վարչական բողոք է ներկայացրել համայնքի ղեկավարին, որով խնդրել է ՀՀ Լոռու մարզի Սարահարթ համայնքի ղեկավարի կողմից ցուցաբերած անգործությունը (կամ գործողությունները) ճանաչել ոչ իրավաչափ, որը կապված է եղել Վաչագան Փիլոյանի ընտանիքին առանց համապատասխան վարչական ակտ կայացնելու հերթացուցակից հանելու և 15.12.2008թ. հերթացուցակում չընդգրկելու հետ և Սարահարթ համայնքի 15.12.2008թ. հերթացուցակում Վ.Փիլոյանի ընտանիքին հաշվառելու մասին ընդունել բարենպաստ վարչական ակտ:

Բողոք բերող անձը միաժամանակ միջնորդություն է ներկայացրել բողոքարկման ժամկետը բաց թողնելը հարգելի ճանաչելու մասին:

Ուսումնասիրելով վարչական բողոքի հիմքերը և հիմնավորումները, նկատի ունենալով, որ գյուղապետարանում առկա չէ վարչական բողոքի մասնակցին հերթացուցակից հանելու վերաբերյալ որոշում կամ դրա վերաբերյալ համայնքի բնակչին ծանուցելու վերաբերյալ այլ ապացույց, գտնում եմ, որ բողոք բերողի կողմից ներկայացված բողոքարկման ժամկետը բաց թողնելը հարգելի ճանաչելու մասին ներկայացված միջնորդությունը հիմնավոր է, ենթակա է բավարարման, իսկ վարչական բողոքը ենթակա է քննության «Վարչարարության հիմունքներ և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան:

Ինչ վերաբերում է վարչական բողոքի բավարարմանը, ապա գտնում եմ, որ այն անհիմն է և ենթակա չէ բավարարման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Սարահարթ համայնքի գյուղապետարանում առկա չեն պահպանված տեղեկություններ Սարահարթ համայնքի՝ մինչ 2008 թվականի դեկտեմբերի 15-ը կազմված հերթացուցակների վերաբերյալ: Բողոքաբերը չի ներկայացրել որևէ ապացույց այն մասին, որ Սարհարթ համայնքում նախկինում կազմվել և հաստատվել են հերթացուցակներ և իր ընտանիքը ընդգրկված է եղել նշված հերթացուցակներում, նման պայմաններում համայնքի ղեկավարը չի կարող հաստատված համարել անգործության գործությունը ու այն ճանաչել ոչ իրավաչափ: Բարենպաստ վարչական ակտ ընդունելու վերաբերյալ խնդրամասի մասով հարկ է փաստել, որ ՀՀ կառավարության 13.11.2008թ. թիվ 1337-Ն որոշմամբ հաստված կարգի 22-րդ կետի համաձայն համայնքի ղեկավարը 2008 թվականի դեկտեմբերի 15-ից հետո որոշում կայացնելու իրավասություն չունի, հետևաբար 2008 թվականի դեկտեմբերի 15-ից հետո համայնքի ղեկավարը որոշում կայացնելու լիազորություն չունի և այդ խնդրանքը բավարարել ևս հնարավոր չէ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 76-րդ հոդվածի բ) կետով

ՈՐՈՇԵՑԻ

- Վաչագան Փիլոյանի կողմից ներկայացված վարչական բողոքը մերժել:
- Սույն որոշման օրինակը եռօրյա ժամկետում հանձնել Վաչագան Փիլոյանին և պարզաբանել, որ որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ այն ստանալուն հաջորդող օրվանից երկամսյա ժամկետում:

Համայնքի ղեկավար՝ **Ա.Փիլոյան**